4087







# ԽՈՐՀՐԴ·Ր·ՏՆ

որ սրբազան Պատա
րագի։ Ըստ Ր,բարոզուէ
Եկեղեցեցն Հայաստա
նեաց։ Սրբոյ Յաթոռոյն
Էջմիածնի ընդ հանուր
մայր եկեղեցւոյ․ զոր հիմ
նեցեալ ՚ի Քնէ։ Եւ հո
րին գծագրեալ Սրբոյն
Գրիգորի Լուսաւորչին։
Որոյ փոխանորդացն միոյ
իսկ Տն
Սրբազան Կաթուղիկոսին՝
Համօրէն Հայաստանեաց։
Իսկ ՚ի թվին Փրկչին ռէ
ՃԻ։ Եւ ՚ի թվականութն
Ր,րամեան ռՃ Ճ·Ծ· Է, Յամ
սեանն օգոստոսի։ Տպա
գրեցաւ ՚ի նորաքեղաքս որ
պարանի՝ գրիգոր դպրի
մարզուանեցոյ՝ ՚ի մայրաքաղաքն
Կոստանդնուպոլիս։







537
537 այ
8656-57

ՕՐՀՆԵՔ ԱՐԲԱՆԵԱԿ ըզ սպաս եկեղեցւոյ. Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել.

ՊԱՐՏԻ ԱՅՍՊԷՍ խորհրդաբար զգեստաւորել. մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն ուր ըզգեստքն են պատարագի. Եւ ըզգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի. Ասասցեն սաղմոս ճլա. Կցորդ.

ՔԱՀԱՆԱՅՔ քո զգեցցին զարդարութի. և սբք քո ցնծալով ցնծասցեն. փոխ. Յիշեա տր զդաւիթ և զամ հեզութի նորա: Որպէս երդուաւ տն. և ուխտս եդ այ յակոբայ: Եթէ ոչ մտից ի յարկս տան իմոյ. եթէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Եթէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանաց իմոց կամ հանգիստ իրանաց իմոց. մինչեւ գտից զտեղի յարկի տն այ յակոբայ.

Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. և գտաք զնա ի դաշտս մայրեաց:

Մտցուք ի յարկս նորա. երկիրպագցուք ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա: Արի տր ի հանգիստ քո. դու. և կտակարան սրբութեան քո:

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն. և սբք քո ցնծալով ցնծասցեն:

Վն դաւթի ծառայի քո. մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումէ:

Երդուաւ տէր դաւթի
ճշմարտութե̃ եւ ոչ ստեաց
նմա·՚ի պտղոյ որովայնի նր̃
նստուցանել յաթոռ նր̃:

Եթէ պահեսցեն որդիք
քո զօրէնս իմ, եւ զվկայու
թիւնս զոր ուսուցից նց̃:

Որդիք նց̃ նստցին յաւի
տեանս յաւիտենից յա
թոռ քոյ:

Հաճեցաւ տէր ընդ սիոն·
եւ ընտրեաց բնակել ՚ի նմա,
ասէ· այս է հանգիստ իմ
յաւիտեանս յաւիտենից·
՚ի սմա բնակեցայց՝ զի հա
ճեցայ ընդ սայ:

Զորս սորա օրհնելով օրհ
նեցից· եւ զաղքատս սորայ
լցուցից հացիւ:

Երիցանց սորայ զգեցու
ցից զփրկութիւն· եւ ս̃բք
սորա ցնծալով ցնծասցեն:

Անդ ծագեցից եղջեւր ՚ի
դաւիթ· պատրաստ արա
րից ճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց սորա զգեցու
ցից զամօթ· եւ ՚ի վր̃ նորա
ծաղկեսցի սրբութիւն իմ:

Փառք հօր եւ Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ· Այժմ եւ:

Եւ քարոզեսցէ սարկաւագն·

Եւ ես խաղաղութի̃ զե̃ր:

Խնդրեսցուք հաւատով
միաբանութե̃ ՚ի տնէ, Զի
զողորմութեան զշնորհս
իւր արասցէ ՚ի վերա մեր:

Ամենակալ տէր ա̃ծ մեր,
Կեցուսցէ Եւ ողոր:

Եւ Ասասցեն Երկոտասան
Տր̃ Ողորմեայ·

Ով սրբազան պատարագիչ
Յիշեա Յաղօթս Քրիս
Զմատակարար Գործա
րանիս:

Եւ զհոգիս Ննջեցելոց
նորին ՚ի Քն̃ Յն̃·


INRI

Աղօթք Աս
տուածային.
Պատարագիչ
Քահանային
Յառաջ քան
զգեստաւո
րելն.

# ՈՐ ԶԳԵՑԵԱԼ ԵՍ Զ

## ԼՈՅՍ ՈՐՊԷՍ ՀԱՆԴԵՐՁ ՏԷՐ

մեր Յ̃ս Ք̃ս: Ամենակալ խնամարկութբ̃ յերկիր երևեցար,
և ընդ մարդկան շրջեցար: Որպէս քահանայապետ յաւիտենից
ը̃ստ կարգին Մելքիսեդեկի. և զարդարեցեր զեկեղեցի քո:

Տր̄ ամենակալ՝ որ պարգե-
ւեցեր մեզ զնոյն զերկնայ
ին հանդերձ զգենուլ.
Արժանի արա և զիս ՚ի
ժամուս յայսմիկ զանպի
տան ծառայս քո:
Որ համարձակիմ, և մերձե-
նամ ՚ի նոյն հոգևոր պաշ
տօն փառաց քոց: Ող̄ զե
զե̄մ ամբարշտութեան մերկա
ցայց՝ որ է՛ հանդերձ պղ
ծութե̄. և զարդարեցայց
լուսով քով. ընկեա՛ յինէն
զչարիս իմ, և Թօթափեա՛
զյանցանս իմ: Որպէս
զի արժանի եղէց հան
դերձեալ լուսոյդ առ ՚ի
քէն: Շնորհեա՛ ինձ
քահանայական փառօք
մտանել ՚ի պաշտօն սրբու
թեանց քոց. ընդ այնոսիկ
որք անմեղութե̄ պահե
ցին զպատուիրանս քո:
Զի եւս պատրաստ գը
տայց երկնաւոր առագաս
տիդ՝ ընդ իմաստուն կու
սանսն՝ փառաւորել ըզ

քեզ Քս̄, որ բարձեր ըզ
մեղս ամենեցուն:
Զի դու ես սրբութի̄ ան
ձանց մերոց. և քեզ բարե
բարիդ ա̄յ վայելէ փառք
իշխանութիւն.

Եւ մատուցեալ սարկաւագուն
քըն զգեցուցէն նմա զհան
դերձն սաղմոսելով. Եւ քահա
նայն դիցէ յառաջ զխոյրն ՚ի
գլուխն ասասցէ.

ԴԻՐ ՏԷՐ
Սաղաւարտ
փրկութե̄ ՚ի
գլուխ իմ,
պատերազմել՝ ընդ զօրու
թիւնս թշնամւոյն:
Շնորհօք տ̄ն մերոյ Յս̄ի
Քս̄ի. որում վայելէ.

Շապիկն.

Զգեցո տ̄ր ինձ հանդերձ
փրկութե̄. և պատմուճան
ուրախութե̄: Եւ շուրջ
պատեա զգեստիւ փըր
կութեան: Շնորհօք:

Գօտին.

Է Շն

Ուրարին·

Օձեցո Տր պարանոցի իմոյ զարդարութի: Եւ սրբեա զսիրտս յամ աղտեղութէ մեղաց· Շնորհօք:

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ եւ մտացս: Եւ չիջուսցէ ՚ի նմանէ զխորհուրդս աղտեղիս: Եւ զօրութի շնորհաց քոց՝ յամ ժամ բնակեսցէ ՚ի նոսա: Շնորհօք:

Բազպանին·

Տուր Տր զօրութի ձեռաց իմոց, եւ լուա զամ աղտեղութիւնս: Զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութբ հոգւոյ եւ մարմնոյ· Շնորհօք:

Նափորտին որ է շուրջառ·

Տր ողորմութբ քով ըզգեցո ինձ զգեստ պայծառ եւ պատրաստեա ընդ դէմ ներգործութե չարին: Զի արժանի եղէց փառաւորել



զքո փառաւորեալ անունդ· Շնորհօք·

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն ասէ·

Ցնծասցէ անձն իմ ՚ի Տր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե· եւ պատմուճան ուրախութեան՝ իբրեւ փեսայի եդ ինձ պսակ: Եւ ոպ զհարսն զարդու զարդարեաց զիս: Շնորհօք·

Եւ յետոյ եկեսցեն առաջի սրբոյ սեղանոյն· եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով Սղ· ԻԵ, կցորդ·

Լուացից սրբութբ զձեռս·

Սարկաւագն փոխ·

Դատ արա ինձ Տր զի ես:

Քահանայն·

Եւ մտ սրբուհւոյ [illegible]:

Սարկաւագն·

Ած զածածինն եւ զամ·

Քահանայն·

Ընկալ Տր զաղաչանս մեր: Խոստովանիմ առաջի Այ

և սրբուհւոյ ածածնին .
և առաջի ամ սրբոց . և ա-
ռաջի ձեր հարք եղբարք
զամ մեղս զոր գործեալ
եմ, զի մեղայ խորհր-
դով բանիւ, և գործով :
Եւ ամ մեղաց զոր գործեն
մարդիկ . Մեղայ, մեղայ :
Աղաչեմ զձեզ խնդրեցէք
վս իմ յայ զթողութիւն :

Պատասխանեսցեն որք մերձնեն .

Ողորմեսցի քեզ ած հզ-
օրն . և թողութիւն շնորհես-
ցէ ամ յանցանաց քոց ,
անցելոցն և այժմուս , և յա-
ռաջիկայէն փրկեսցէ . և
հաստատեսցէ յամ գործս
բարիս : Եւ հանգուսցէ
զքեզ ՚ի հանդերձեալ
կեանսն . Ամէն .

Պատասխանեսցէ և ինքն .

Ազատեսցէ և զձեզ մար-
դասէրն ած , և թողցէ
զամ յանցանս ձեր . տայցէ

ժամանակ ապաշխարելոյ
և գործելոյ զբարիս ու-
ղղեսցէ և զառաջիկայ կենս
ձեր շնորհօք իւր հոգւոյն ,
հզօրն և ողորմածն և նմա
փառք յաւիտեանս ամէն :

Դպիրքն .

Յիշեսջիր զմեզ Առաջի
անմահ Գառին այ :

Քահանայն .

Յիշեալ լիջիք Առաջի
անմահ Գառին այ :

Դպիրքն . Սղմ . Հ Թ փոխ .

Ընդունեցէք սա դու ամ :

Սարկաւագն քարոզէ .

Սէ եկեղեցեաւս աղմ :

Քահանայն .

Իմեջ տաճարի և առաջի
ած ընկալ երկրպագութիւ-
մր նշանակաց . և մք անզգոյս
խոնարհեալ երկիւղիւ եր-
կիր պագանեմք . մք և զհրա-
շալի և զյաղթող զՏրութի-
քո փառաւորեմք , եքեղ

մա

մատուցանեմք զօրհնութի՛
և զփառս ընդ հօր և ընդ
հոգւոյդ սրբոյ այժմ և
միշտ ։

Քահանայն Սղ․ ԽԲ․ ԿԱ․
Մտից առաջի սեղանոյ ։
Սարկաւագն փոխ ․
Դատաստան արա ինձ Ած իմ և ։
Սարկաւագն ․ Քարոզէ ․
Եւ ևս խաղաղութե՛ զՏր ։

Օրհնեսցուք զհայր տն մերոյ յի՛ի քի՛ի ՝որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջս փառաբանութե՛ և երգել զերգս հոգեւորս ամենակալ ։

Քահանայն ․
Ի յարկի սրբութե՛ և ՚ի տեղւոջ փառաբանութե՛ հրեշտակաց բնակարանի ․ և մարդկան քաւարանի ․ առաջի ած ընկալ և պայծառացեալ նշանացս ․ և սբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք ․ զսբ և զհրաշալի զյաղթող զօրութիւնդ ․ քո օրհնեմք փառաւորեմք և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութի՛ և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ․ Ամէն ․

Իսկ ․ թէ Նշխարհացս լինեցի խորհրդածութ՛ , առցէ զՏր կոն քեռն ․ Եւ ածցէ ՚ի մերոյ լանջացըն ․ զպատուական ամփոփորանն ․ Եւ մատուցեալ առ ընծայաբանսեղանոյն ․ Եւ ՚ի ծունկս անկեալ յորդահոս արտասուօք լուա եան մաքուն[?] ․ ասասցէ զաղօթս ․ Ի սուրբ հոգին անբինեա[?] գործոյն ․

Գրիգորի Նարեկացոյն

ԱՄԵՆԱԿԱԼ
ՏԷՐ ԲԱՐԵՐԱՐ
և մարդասէր
Ած բոլորից ․ յորինող երևութից և աներևութից ․ փրկող և հաստատող ․ Խնամօղ և խաղաղարար ․ հօր հզօր հօգի ․ ընդունեցեմք զաղկա[?]

Ի   Թ   ստ

տարած մաղթանօք, գոչ
մամբ հեծութ. յանդիման
եղեալ քեզ աղաւթիւք։
Սառչիմք մեծաւ դողու
թեամբ, սաստիկ երկիւ
ղիւ։ Մատուցանել նախ
զբանն կնոյ զայս պատարագ
քում անզննին տէրութեանդ։
Իբր աթոռակցի փառակ
ցի և որարչակցի, հայրենի
անկապուտ պատուոյն։
Եւ քննողի ծածկութե
խորոց խորհրդոց։
Ամենակատար կամաց հօրդ
Էմանուէլ. զքեզ առա
քողի, փրկչի, և կենդանա
տուի, և արարչի ամի։
Իձեան քոյ, ծանուցա
մեզ երրեակ անձնաւորու
թի, միասնական աստուածութեանդ։
Յորոց մի և դու ճանաչիս
անհաս։ Քեւ և՝ իձեան
քոյ առաջինքն նահապե
տակն առհմին շառաւիղք,
տեսանողք անուանակոչէք
զանցեալսն, և զգալոցն զե
ղեալսն. և զոչ գոյացեալսն
անստուերաբար բարբառե
լով բանի վերապատմեցին։
Հոգի Այ քարոզեալ զքեզ
մովսէսի, որ ՚ի գնալն քոյ
՚ի վերայ ջուրցն անպարագիր
զօրութիւն։ Ընդ շըջար
կութք տածողականաւ։
Թեւապարփակ պաշտպա
նօղորէն գթասիրեալ ՚ի ծը
նունդս նորոգս, ղաւաղա
նին խորհուրդ ծանուցեր։
Յոր կերպարան օրինակ
ութեան, նախ քան զկատա
ուցանելն զլոյծդ մածուած
վերջնում փարագուրիւդ՝ յօ
րինեցեր կարօղ տիրապէս
Օրավանդակ բնութիւնս
ամենից, բնաւից բոլորից
գոյից յամ էից յանէից։
Քու ստեղծանին ՚ինորո
գութիւն յարութե ամ
եղեալքս առ ՚ի քէն յայնմ
ժամանակի որ է օր վերջին
ապամ կենդանեղի, և որ առա
ջին երկրին կենդանեաց։
Քեզ

Քեզ հնազանդեցաւ մի-
ութեամբ կամացն որդւո
հօրն խուրում, ազգակիցն
քո, էակիցն հօր, անդրա-
նիկն որդի մերովս կերպիւ։
Զքեզ աւետարանեաց
Ճշմարիտ ած՝ հաւասար է
համագոյ հօրն խուրոյ հզօրի
Զաւ իքեզ հայհոյութին
անքաւելի քարոզէր. և ներ
զած ամարտից դէպ հեստե-
լոյն չարաքանական բեր-
անան կարկեաց։ Եւ զխւրն
շնորհեաց՝ արդարն և անա-
րատն գտին ածի։ Որ մի
մեղաց մերոց մատնեցաւ.
և յարեաւ մի զմեզ արդա-
րացուցանելոյ։ Նմա փառք
՚ի ձեռն քոյ իքեզ բարեբա-
նութի ընդ հօրդ ամենա-
կալի յաւիտենից յաւի-
տեանս Ամէն։

Դարձեալ կրկնեցի՛ց ՚ի նոյն կարգ-
բանի. մինչև վերահայեցողութի
լուսոյն հրաշափառագես ազդէ-
լ յայտնեցի աւետարանել մեր
աւուն կրկէն խաղաղութեան.



ԴՐՁԱՄՔ
եաղէրսեմք արտա-
սուա-
լից հա-
ռաչմամբ, յամ անձնէ ըզ-
փառաւորէլ արարչութեդ։
Ընդեղծ եանստեղծ, անժա-
մանակ հօգւոյդ գթածի։
Որ բարեխօսդես վասն
մեր անմաւունչ հեծութիս
ու ողորմածդ հայր։
Որ զքեզ պահես. և զմե-
ղուցեալն մաքրես, և տա-
Հարս կապես կենդանի՛
և կեցուցիչ կամաց բարձր-
եալդ հօր. Որդ աղաւեմ
զմեզ յամ ան մաքուր գոր-
ծոց որոչէ հանձոյ քում
ընակութե. Եւ մի՛ շէջ-
ցին առ ՚ի մեջ լուսոյդ
շնորհաց փայլմունք ՚ի տե-
սականաց աչացս իմաստից.
Այլ ոչ զքեզ ուսուք մա-
նաւ իմեզ ՚ի ձեռն աղօթից
աղնաւոր վարուց ինկելոց։



Եւ

Եւ քանզի մինչ յերրոր-
դութէդ պատարագի ։
եմուտ ընդունիչ հաճեալ
ընդ մեզ հաշտարար ար-
եամբ անդրանկի իւրոյ ։
Ա՛րդ դու ընկալցիս զմեր
պաղատանս, և յարդարես-
ցես զմեզ օթևանս պատ-
ուականս մեծ պատրաստու-
թեամբ ։ Խնայեսցուն ձա-
շակման երկնաւոր գառ-
ինդ ։ Առանց պատժոց
դատապարտութե, ընդու-
նել զայս անմահացուցիչ
մանանայս կենաց նորոգ փր-
կութե ։ Եւ հալեսցի ՚ի
հրոյս յայսմանէ գայթակ-
ղութիւնս մեր ։ որպէս մար-
գարէին, կենդանախարոյկ
կայծակամբն ՚ի ձեռն ունե-
լեացն մատուցման ։
Ով յայսմ ժամի քոյդ քա-
րոզեսցի գթութիւն, որ
որդւոյդ մոյ, հօրդ քաղց-
րութիւն ։ Որ զանառակ
որդին մերձեցոյց ՚ի հայրե-
նի

նի ժառանգութիւն, և
ըզ պոռնիկն յառաջեցոյց
յերկնային արքայութիւն,
արդարոցն երանութեան ։
Որ ոչ այս, և ես միեմ
՚ի նոցանէ, և զիս ընկալ
ընդ նոսին, իբր մարդա-
սիրութե կարօտեալ մեծի ։
Շնորհօք քո ապրեալ
արեամբն քոյին ասացեալս ։
Ով յայսմ ժամի յամուլ
ծանիցի մարդասիրութի
քո՛ ընդ հօր փառաւորել
համապատուաբար, ՚ի մի
կամս և ՚ի մի իշխանութիւն
գոլութեան ։

՚Ի Ձայն ։

Ով քոյդ գթութիւն և
կարողութի, մարդասի-
րութի, զօրութի ։ և փառք
յաւիտեանս Ամէն ։

Ապա յարուցեալ եկեսցէ առ ըն-
ծայարան սեղանոյն ։ առ որ մա-
տուցէ նախապատրաստականն զնշ-
խարն ։ Զոր առեալ քահանայն
դիցէ ՚ի մաղզմանն առելով ։

Յիշա

Յիշատակ տ՟ն մերոյ յ՟սի ք՟ի։
Եւ առեալ զգինին՝ արկցէ խա
չանիշ ՚ի սկիհն ասելով.
Յաղագս յիշատակի փրկա
գործ անօրէնութ՟ե տ՟ն մ՟յ
և փրկչին մերոյ Յ՟սի Ք՟սի։
Եւ ասասցէ զաղօթս ի ծածուկ
Յովհաննու Ոսկեբերանին.
Տ՟ր Ա՟ծ մեր որ զերկնաւոր
հացդ զտ՟ր մեր Յ՟ս Ք՟ս.
զկերակուրդ ա՟մ աշխարհի։
Առաքեցեր փրկիչ՝ և կե
ցուցիչ և բարերար օրհնել
և սրբել զմեզ. ինքնին դու
տ՟ր օրհնեա և այժմ զառա
ջադրութիս զայս։ Ընկալ
զսա՛ յերկնային քո սեղանդ։
Յիշեա տ՟ր բարերար և
մարդասէր՝ զմատուցօղս. և
վասն որոց մատուցանի։
Եւ զմեզ անդատապարտ
պահեա, ՚ի քհ՟նայագործութ՟ե
ա՟ծային խորհրդոյ քոյ։
Զի տ՟ր և փառաւորեալ է
ամենապատիւ մեծ վայելչու
թիւն փառացդ հօր և որդ
ւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ
և միշտ և յաւիտեանս։
Եւ օրհնեսցէ ասելով.
Տ՟ր Թագաւ։ Հաստա։
Ամբարձան։ ՚Ի ձայնէ։
Անքննելի։ Տան քում։
Գործել. գ՟, անգամ խաչակնքե
ասելով.
Հոգին տ՟ր եկեսցէ ՚ի քեզ
և զօրութ՟ն բարձրելոյն հո
վանի լիցի ՚ի վ՟ր քեզ.
Եւ արկցէ Զխունկն ասելով.
Խունկ մատուցանեմ ա
ռաջի քո Ք՟ս բուրում՟ն
հոգևորական։ Ընկա՛լ ՚ի ս՟բ
յերկնային և յիմանալի քո
մատուցարանդ ՚ի հոտ ան
ուշից։ Առաքեա առ մեզ
փոխարէն զշնորհս ևզպար
գևս հոգւոյդ սրբոյ՝ և քեզ
մատուցանեմք զփառս ը՟ն
հօր և ընդ հոգւոյդ սրբոյ,
Այժմ և միշտ և յաւ։

Եւ երից երկրպագեալ Քա
հանայն համբուրեսցէ զսեղա
նըն։ Եւ Սարկաւագն կացե՟լ
Ծր ՚ի մէջ.

'ի մէջ տաճարին ձայնեսցէ ա֊
սելով։ Օրհնեա Տր։ Եւ Քա֊
հանայն 'ի Ձայն Ասասցէ.

ԱՒՐՀՆԵԱԼ թագաւորութիւն հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և՛՛.

Եւ Սկսանիցեն այլ Եկեղեցա֊
կանքն ժամամուտ Ըստ Պաշ֊
տաճի Երգերն։ Եւ Ի կատար֊
մանն Երգոյն Քարոզեսցէ.

Սարկաւագն.

Եւ ևս խաղաղութե զՏր
Քահանայն Օրհնութիւն Եւ
փառք դպիրքն.
խաղաղութի ամենեցուն,

Եւ ընդ հոգւոյդ քում։
Օրհնեա Տր։

Եւ Քահանայն Ասասցէ
զաղօթս.

Տէր Եծ մեր որոյ կարողու֊
թիւդ անքննելի և փառքդ
անհասանելի։ Որոյ ողոր֊
մութիւնդ անչափ և
գթութիւնդ անբաւ։ Դու
ըստ առատ մարդասիրու֊
թեանդ քում։ Նայեաց 'ի

ժդ

ժողովուրդս քո. և 'ի տա֊
ճարս այս սրբ։ Եւ արայ
ընդ մեզ՝ և ընդ աղօթա֊
կիցս մեր առատապէս զո֊
ղորմութիւնս քո և զգթութիւնս։
Զի քեզ վայելէ փառք
իշխանու։

Քահանայն Ասասցէ խորհր֊
դաբար.

Տէր Եծ մեր՝ կեցոյ զժողո֊
վուրդս քո. և օրհնեա զժա֊
ռանգութիւնս քո. զլրումն
եկեղեցւոյ քոյ պահեա։
Սրբեա զսոսա որք սիրե֊
նեցեն սիրով զվայելչութ֊
եան քոյ։ Դու զմեզ փա֊
ռաւորեա աստուածային զօրու֊
թեամբ քով և մի թողուր
զյուսացեալս 'ի քեզ։
Զի քոյ է կարողութիւն և
զօրութիւն և փառք յաւի֊
տեանս Ամն.

Խաղաղութիւն Ամենեցուն.

Որ հասարակաց զայս և
միաձայն մեզ ամենեցուն
ուսուցեր աղօթել։

Եւ

Եւ զերկուց՝ ազերից միաձայնելոց յանուն քո՝ ըղձնդրուածս պարգևել խոստացար։ Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ 'ի յօգուտն կատարեա՛, շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեան։ Եւ 'ի հանդերձեալ զկեանսն յաւիտենականս պարգևելով։

Ով բարերար և մարդասէր ես ա̃ծ. և քեզ վայել,

Եւ ապա տասցի հրաման ըստ պատշաճի աւուրն. Եւ 'ի մէջ տանն երթիցեն առաջի բեմին, և երկրպագցեն երիցս. Եւ Քահանայն տասցէ զաղօթս.

Տէր Յ̃ս մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս, և զինուորութիւնս հրեշտակաց. և հրեշտակապետաց. 'ի սպասաւորութիւն փառաց քոց։ Արա այժմ ընդ մուտս մեր՝ մտանել սրբոց հրեշտակաց, ընդ նիլ պաշտօնակից մեզ՝ և փառաբանակից քում բարերարութեանդ։

Ի Ձայն.

Ով քոյդ կարողութի և զօրութի. և փառք յաւիտ՛։

Եւ համբուրեսցեն զսեղանն, Եւ յաւարտման Հրաշկնեն գոչեսցէ Սարկաւագն.

Պրո́սխումէ́ն։

Եւ տասցեն Զերեք Սրբեան Ձայնիւ,

Ս̃բ ա̃ծ ս̃բ և հզօր ս̃բ և ա̃։ Եւ քահանայն Զայս ամն ասէ Ի ծածուկ Զաղօթս.

Ա̃ծ ս̃բ, որ 'ի սուրբս հանգուցեալ ես, և երեք սրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ. և քերովբէք փառաբանեն, և ամ̃ երկնային զօրութիւնք քեզ երկիր պագանեն։ Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամ արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում, և նմանութեան, և ամ̃ շնորհիւ քո

զնա զարգարեցեր. և ու-
սուցեր խնդրել զիմաս-
տութիւն և զգօնութիւն։
Եւ ոչ անտես արարեր
զմեղուցեալս։ Ա՛յլ եդեր
'ի մէջ նորա ապաշխարու-
թիւն փրկութեան։
Որ արժանի արարեր ըզ-
մեզ զնուաստացեալս և զա-
նարժան ծառայս քո 'ի ժա-
մուս յայսմիկ կալ առաջի
փառաց սրբութեան սեղա-
նոյ քոյ։ Եւ զօրհնաւոր
երկրպագութիւն և զփառա-
բանութիւն մատուցանել
քեզ։ Դու տէր ընկալ
'ի բերանոյ մեղաւորացս
զերեք սրբեան օրհնութիւնս.
և պահեա զմեզ քոյին քաղց-
րութեմբդ. Թող մեզ զամ
յանցանս մեր՝ զկամայ և
զակամայս. սրբեա զհոգի,
զմիտս, և զմարմինս մեր,
և շնորհեա սրբութեամբ
պաշտել զքեզ զամենայն
աւուրս կենաց մերոց։

բարեխօսութեամբ սրբու-
հւոյ ածածնին, և ամ սր-
բոց քոց՝ որք յաւիտենից
քեզ բարեհաճոյացան։
Զի դու ես տէր ած մեր. և
քեզ վայելէ փառք իշխա։
Եւ Սարկաւագն Քարոզեսցէ.
Եւ ես խաղաղութեան։
Սան խաղաղութիւն ամ։
Սարկաւագն Ձայնեսցէ.
Օրհնեա տէր։
Եւ Քահանայն բազկատարած
Ասասցէ 'ի ծածուկ զաղօթս.
Տէր ած մեր՝ զբազկատա-
րած զաղաչանս ծառայից
քոց վեր ընկալցիս, և ողոր-
մեսցիս ըստ մեծի ողորմու-
թեան քում։ Զգթութիւն
քո առաքեա 'ի վերայ մեր՝
և ամ ժողովրդեանս. որք
ակն ունին առ 'ի քէն ա-
ռատ ողորմութեանդ։
Ձայն.
Զի ողորմած և մարդա-
սէր ես ած գոլով. և քեզ։
Եւ Քահանայն նախ յառաջա-
նըն. և սկսանիցեն Սաղմոսա

խորհրդոյ Աւուրն․ Եւ ընթ
երցցին զգիրս մարգարէական
և Առաքելական․ Եւ զնէ
Ալէլու ըստ ցուցանելո Ընթեր
ցուածոյն․ Եւ յաւարտմանն
Սարկաւագն ձայնեսցէ
բարձր․

Օրհնէ․

Քահանայն դառնայ ՚ի խորա
նէն․ և խաչակնքէ ՚ի վերայ
ժողովրդեանն ասէ․

Խաղաղութի ամենեցուն։

Դպիրքն․

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն․

Երկիւղածութբ լուա
րուք․

Սարկաւագն․

Արդ Աւետարանիս
Ըստ Մատթէոսի։

Դպիրքն․

Փառք քեզ Տր Ած մեր։

Սարկաւագն․

Պրօսխումէ։

Դպիրքն․

Ասէ Աստուած․

Եւ Սարկաւագն ընթեռնու
Աւետարանն․ Եւ յաւարտ
մանն՝ ասեն ամենեքեան․

Փառք քեզ Տր Ած մեր․

Եւ ասեն Հաւատամքն․

ՀԱՒԱՏԱՄՔ
՚ի մի Ած՝ Հայր ամե
նակալ՝ յարարիչն
երկնի և երկրի, եր
ևելեաց և աներևութից։
Եւ ՚ի մի Տր յս քս յորդին
այ, ծնեալն յայ՝ Հօրէ միա
ծին․ այս ինքն յէութենէ
Հօր։ Ած յայ, լոյս ՚ի լուսոյ,
Ած ճշմարիտ՝ յայ ճշմար
տէ ծնունդ և ոչ արարած։
Նոյն ինքն ՚ի բնութենէ
Հօր․ որով Ամ ինչ եղև
յերկինս և ՚ի վր երկրի․
երևելիք և աներևոյթք։
Որ յաղագս մեր մարդ
կան՝ և վասն մերոյ փրկու
թեան, ՚ի ջեալ յերկնից․
մարմնացաւ․ մարդացաւ․
ծնաւ կատարելապէս





ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР А.
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
8656-5Հ 537

՚ի մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւով սրբով ։

Որով էառ մարմին՝ հոգի և միտք, և զա̄մ որ ինչէ ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք ։

Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ ․ յերրորդ աւուր յարուցեալ․ ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ հօր ։

Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր, դատել զկենդանիս և զմեռեալս ։

Որոյ թագաւորութ̄ե̄ն ոչ գոյ վախճան ։

Հաւատամք և ՚ի սուրբ հոգին յանեղ և ՚ի կատարեալ ։

Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգ̄րէս՝ և յաւետարանս ։

Որ էջ ՚ի յորդանան, քարոզեաց առաքելոյն ․ և բնակեցաւ ՚ի սուրբսն ։

Հաւատամք և ՚ի մի միայն ընդ հանրական, առաքելական եկեղեցի ․

՚ի մի մկրտութիւն ։

Յապաշխարութիւն, ՚ի քաւութի̄, և ՚ի թողութիւն մեղաց ։

՚ի յարութիւն մեռելոց, ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց ։

՚ի յարքայութի̄ երկնից․ և ՚ի կեանսն յաւիտենականս ։

Իսկ որ ասենն, էր երբեմն․ յորժամ ոչ էր որդի․ կամ, էր երբեմն․ յորժամ ոչ էր սուրբ հոգին․ կամ թէ յոչ էից եղեն կամ յայլ մէ էութենէ ասեն լինել զորդին ա̄յ․ և կամ զսուրբ հոգին ։ Եւ թէ փոփոխելի են․ կամ այլայլի․ զայսպիսին նզովէ կաթուղիկէ՝ և առաքելական եկեղեցի ։

Լուսաւորչին ․

Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան ըզ յաւ-

յաւիտեանս, երկիր՝ պա
գանելով սրբոյ երրորդու
թեանն՝ և միածութեանն
հօր և որդւոյ և հոգւոյն
սրբոյ. Այժմ և միշտ և՛:

Սա Սարկաւագն քարոզեսցէ
'ի ձայն.

Եւ ևս խաղաղութեան
զՏր աղաչեսցուք:

Դպիրքն Տր ողորմեա:
Եւ ևս հաւատով աղա՛

Մինչ նոքա Երգեսցեն. Քահա
նայն Զաղօթս Ասասցէ Կցած.

Տր մեր և փրկիչ Յս Քս
որ մեծ ես ողորմութբ՝
և առատ պարգևօք բարե
րարութեան քո:
Որ դու քոյին կամաւ 'ի
ժամուս յայսմիկ համբե
րեցեր չարչարանաց՝ խաչի
և մահու՝ յաղագս մեղաց
մերոց: Եւ պարգևեցեր ա
ռատապէս զպարգևս հոգ
ւոյդ սրբոյ՝ երանելի առա
քելոցն: Առաջնորդս արա
եզմեզ Տր, աղաչեմք զքեզ
ածային պարգևացդ, թո
ղութեան մեղաց. ընդու
նելութն հոգւոյդ սրբոյ:

Գ. Ձայն.

Որպէ՛ս զի արժանաւորք
եղիցուք գոհութբ փա
ռաւորել զքեզ ընդ հօր
և ընդ սուրբ հոգւոյդ,
այժմ և միշտ և՛:

Խաղաղութիւն ամենեցուն.
Դպիրք ևընդ հոգւոյդ քում:
Սարկաւագն Այ երկրպագես
ցուք.
Դպիրք Առաջի քո Տր.

Խաղաղութբ քով Քս
փրկիչ մեր, որ 'ի վեր է՛ քան
զամենայն զմիտս և զբանս:
Ամրացո՛ զմեզ և աներկիւղ
պահեա յամ չարէ. հաւա

արէցո զմեզ ընդ ճշմարիտ
երկրպագուս քո՛ որք հոգ-
ւով և ճշմարտութեամբ քեզ
երկիրպագանեն. քո՛ զի
ամենասուրբ երրորդութեանդ
վայելէ փառք իշխանութիւն ։

Օրհնեալ տր մեր յաւքս ։

Ամէն ։

Սարկաւագն .

Օրհնեա՛ տր .

Քահանայն

Տր ամ օրհնեսցէ զամե ։

Սարկաւագն.

Սաղմոս ասասցէք տն.

Եւ ասէ Սրբասացութին ըստ
խորհրդեան աւուրն. Յետոյ
Սարկաւագն ձայնէ ևասէ.

Մի ոք յերախայից մինչ
՚ի թերահաւատից. և մի՛ ոք
յապաշխարողաց և յանմաք
րից մերձեսցի յաստուածային
խորհրդոս ։

Դպիրքն եղանակեսցեն .

ի

Մարմին տրունական ։

Եւ Դպիրքն եղանակեն .

Որք ըստ քրովբէիցն ։

---

Եւ ՚ի սարկաւագացն մի բե
րէ Սրբազան հացն. և անմա
հութեան բաժակն ՚ի Սուրբ
սեղանն. Եւ մինչ նուագերգին.
Քահանայն խնարհի առաջի
Սրբոյ սեղանոյ. Եւ խորհրդա
բար աղօթէ ի ծածուկ.

Ոչ ոք արժանի է յըմբռնե
լոց մարմնաւոր ախտիւք
և ցանկութեամբ մատչել ՚ի սե
ղան քո, կամ սպասաւորել
արքայութեան փառացդ քոց.
քանզի պաշտել զքեզ մեծ
և ահաւոր, երկնաւոր զօ
րութեանցդ իսկ է ։ Այլ վասն
վն անչափ բարերարութե
քո՝ անպարագրելի բանդ
հօր, եղեր մարդ, և քահա
նայապետ մեր երևեցար ։
Եւ

Եւ ետ մեր ամենեցուն այսմ սպասաւորութե, և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ. վս զի դու ես Տր Ած մեր որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց։ Որ ՚ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս սերովբէից տր և թագաւոր Իսրայէլի։ Որ միայն սբ ես և ՚ի սուրբս հանգուցեալ։ Աղաչեմ զքեզ միայն բարերար և հեշտալսելի, նայեաց յիս ՚ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո։ Եւ սրբեա զհոգի և զմիտս իմ յամ պղծութէ չարին։ Եւ բաւականացո զիս զօրութեամբ սբ հոգւոյդ։ Որ զգեցեալեմ զքահանայականս շնորհ. կալ առաջի սրբոյ սեղանոյս. և քահանայագործել զքո անարատ մարմինդ, և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ, աղաչեմ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն, և մի մերժեր զիս ՚ի ծառայից քոց։ Այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ՚ի մեղուցելոյ և յանարժան ծառայէս քումմէ. վս զի դու ես որ մատուցանես, և մատչիս, և ընդունիս, և տաս քս Ած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբն քո հարբդ և ամենասուրբ և բարերար հոգւովդ այժմ։

---

Եւ ընծայքն վերաբերին ՚ի սեղանն Սուրբ. Եւ Քահանայն խնկարկէ ՚ի վերայ սեղանոյն. Եւ լուանայ զձեռսն ասելով։

Լուացայց սրբութեամբ։

Եւ քարոզեսցէ Սարկաւագն.

Եւ ևս խաղաղութեան։

Դպիրքն.

Տէր ողորմեա։

Սարկաւագն.

Եւ ևս հաւատով և որ։

Եւ քահանայն թէ Սարկաւագ կամ ՚ի խորհրդեանն. մինչ նայ զքարոզն ասէ. քահանայն երկրպագեսցէ՝ և խաչակնքէ ըզ ժողովուրդն. եպիսկոպոսարան կամ առաջի սեղանոյն. և ասէ զաղօթս ՚ի ծածուկ.

ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ զօրութեանց և արարիչ ամ լինելութեանց։ Որ յանէութենէ ըզնաւս ՚իցուցակութիւն ածեալ գոյացուցեր։ Որ և զմեզ ըզ հողեղէն՝ բնութիւնս պատուեալ մարդասիրապէս։ Որ յայսմ ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս։ Դու

Դու Տր որում պատարագեմք զպատարագիս։ Ընկալ առ ՚ի մէնջ զառաջաւորութիւնս զայս, և աւարտեա զսա ՚ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քո գեղ. թողութիւն մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս և զբաժակս։

Դ. Ձայն.

Շնորհօք և մարդասիրութեամբ Տն մերոյ և փրկչին Յսի Քսի։ Ընդ որում քեզ հօր միանգամայն և հոգւոյդ սրբոյ՝ վայելէ փառք իշխան։

Խաղաղութի. ամենեց։

Դպիրքն.

Ամէն.

Եւ ընդ հոգւոյդ քում։

Ող

Սարկաւագն․

Ողջոյն տուք միմեանս։

Դպիրքն եղանակեն․

Քս ՚ի մէջ մեր յայտնեա՛։

Եւ համբուրեսցեն զսեղանն և զմիմեանս․ Եւ ձայնեսցէ

Սարկաւագն․

Ահիւ կացցուք երկ։

Դպիրքն․

Առ քեզ աստուած։

Սարկաւագն․

Պատարագ Քս մատչի։

Դպիրքն․

Ողորմութի և խաղաղ։

Քահանայն դառնայ և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն և ասասցէ․

Շնորհք, սէր, և ա՟ծային սրբարար զօրութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ․ եղիցի ընդ ձե՟զ ընդ ամենեսեան։

Դպիրքն․

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն․

՚Ի վե՟ր ընծայեցուցէք։

Դպիրքն․

Ունիմք առ քեզ Տ՟ր ամ։

Սարկաւագն․

Եւ գոհացարուք ըղ։

Դպիրք․

Արժան և իրաւ։

Քահանայն ձեռնամած աղօթէ ՚ի ծածուկ․

Արժան է ստուգապէս և իրաւ՝ ամենայն որդոր փութով միշտ երկիր պագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ։ Որ քոյին անզննելի և արարչակից բանիւդ, զանիծիցն բարձեր զխ՟չ։ Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս ՚ի քեզ։ Եւ զննելի բնութ՟ ըստ ՚ի կուսէն տնտեսութ՟ հաճեցաւ բնակել ՚ի մեզ։ Եւ նորագործ ճ՟արտարապետեալ զեր

կիրս երկին արար ։ Մի՛ զե
որում ոչ՛ հանդուրժե
ին առաջի կալ զուարթ
նոցն Ջոկք . զարհուրեալք՝
'ի փայլակնացայտ և յանմա
տոյց լուսոյ ծծուԹեանց ։
Եղեալ այդ պխիդ մարդ՝
յաղագս մերոյ փրկուԹե̃ .
շնորհեա մեզ ընդ երկ
նայինն պարել զհոգեղէն
զպարս ։

Դ. Ձայն .

Եւ ընդ սերովբէից , և
ընդ քերովբէսն . միաձայն
սրբասացուԹբ յօրինել
նուագս ։ Եւ համարձակա
պէս գոչելով աղաղակել
ընդ նոսին եւասել .

Դոպէրն .

Մէ՛ ու՛ ու՛ ար զօրուԹէց .
Մինչ նոքա երգեն . Քահա
նայն բազկատարած աղօԹե
'ի ծածուկ .
Մէ՛ ու՛ ու՛ եւ ճշմարտա
պէս՝ և ամենայնք . և մի՛ ոք

պանծացի բովանդակել
բանիւ զքո 'ի մեզ զանպատ
բարեգործուԹիւնդ զի զմարմնս
Որ և անդէն իսկ 'ի նախ
նումն զանկեալն ընդ մեզ՝
զանազան եղանակօք խնա
մոց սփոփեցեր , Մար
գարէիւք , Օրինացն տըւ
չուԹեամբ , Քահանայու
Թբ , Եւ սաւերակերպ
երընջոցն մատուցմամբ ։
Իսկ 'ի վախճան աւուրցս
այսոցիկ՝ զբովանդակ իսկ
զպարտեաց մերոց խզեալ
զձեռագիրս ։ Եղաւ մեզ
զորդիդ քո միածին ։ Փա՛ր
տապան և պարտս ։ Օ
նումն՝ և ծնեալ ։ Գառն
երկնաւոր հօր . Քահա
նայապետ՝ և պատարագ ։
Մի՛ զի ինքն է բաշխօղ . և
նոյն ինքն բաշխի 'ի միջի մե
րում միշտ անծախապէս .
Մի՛ զի եղե̃ւ հաստատեալ՝
և առանց ցնորից մարդ ։



Եւ

Եւ անշփօթ միութե՛ մար
մնացեալ յածածին և ՚ի
միշտ կուսէն մարիամայ։
Զանապարհորդեաց ընդ
ամենայն կիրս մարդկային
կենցաղոյս առանց մեղաց։
Եւ յաշխարհակեցոյց և
յաւիտենական փրկութե՛ մերոյ
եկեալ կամաւ ՚ի խաչն։
Տուեալ զհոգին ՚իւր յանձ
ային, յանմահ, յանա
րատ և յարարչագործ
ձեռս իւր։ Օրհնեաց, գո
հացաւ, եբեկ, ետ իւրոց
ընտրեալ ՟ժբ և բազմեալ
առաքելոցն ասելով։
Նմայն.

ԱՌԷՔ ԿԵ
ՐԷՔ ԱՅՍ Է
ՄԱՐ
ՄԻՆ ԻՄ

որ վ͞ս ձեր և բազմաց բաշ
խի ՚ի քաւութի՛ և ՚ի թո
ղութի՛ մեղաց։
Նոյնպէս և զբաժակն

առեալ։ Օրհնեաց, գոհա
ցաւ, էարբ, և ետ իւրոց
ընտրեալ ՟ժբ և բազմեալ
առաքելոցն ասելով։
Արբէք ՚ի սմանէ
Ամենեքեան. Այս է

ԱՐԻՒՆ ԻՄ

նորոյ ուխտի, որ յաղագս
ձեր և բազմաց հեղու ՚ի
քաւութի՛ և ՚ի թողութի՛
մեղաց։
Եւ զայն միշտ իւր յիշա
տակ առնել պատուի
րան աւանդեաց մեզ բա
րերար որդիդ քո միածին։
Եւ իջեալ ՚ի ստորին վայրս
մահու մարմնովն զոր ՚ի մեր
մէջ ընկալաւ յազգակ
ցութէ։ Եւ զնիգս դժո
խոցն աղարտեալ հզօր
եղապէս։
Զքեզ միայն ծանոյց մեզ
ճշմարիտ ա͞ծ, զա͞ծ կեն
դանեաց և մեռելոց։
Դ ին Եւ

Եւ Առեալ Զընծայն Նշխարն
Ասասցէ Նուագ .

Եւ արդ մեք Տէր ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քո: Յիշեմք զչորայ՝ որ վասն մեր զփրկագործ չարչարանսն. Զկենդանատու խաչելութիւնն: Զերեք օրեայ թաղումն: Զերանելի յարութիւնն: Զաստուածապէս համբարձումն: Զնստելն ընդ աջմէ քո Հայր: Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք:

Եւ Դպիրն Զընծայն Դպիրաց Մեղանոյս, Եւ Ասասցէ:

Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն:

Դպիրքն .

Յամենայնի օրհնեալ ես Տէր:

Մինչ Նոքա Երգեն, Քահանայն բազկատարած աղօթեսցէ
Ի ծածուկ .

Զքեզ արդար և Տէր Աստուած մեր գովեմք՝ և զքեն գոհանամք հանապազ: Որ զանց արարեր զմերոյս անարժանութեանս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեց՝ յորոց յոյժ թափուր եմք, և միշտ ունայն գտանիմք հանապազ: Այլ ի քո բազմացեալ ներողութեանդ ցանկ ապաւինեալ համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան միածնի քո Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ

որում վայելէ փառք իշ խանութիւն. և պատիւ:

Խաղաղութիւն ամենեցուն:

Սարկաւագն.

Աստուծոյ երկրպագեա:

Դպիրքն.

Առաջի քո տէր:

Քահանայն խոնարհեալ ասէ.

Երկրպագանեմք և աղա չեմք, և խնդրեմք ՚ի քէն բարերար տծ: Առաքեա՛ ի մեզ. և յառաջի եղեալ ընծայս այս՝ զմշտնջենաւո րակից քո, և զէակից սբ զհոգիդ:

Եւ կանգնեալ խաչակնքէ զըն ծայսն ասելով ցած.

Սկիհն բաց.

ՈՐՈՎ ԶՀԱ ցս օրհնեալ մար մին ճշմարտապէս արասցես՝ տն մերոյ և փրկ չին Յսի Քսի: Որով զհացս օրհնեալ մարմին՝ ճշմարտապէս արասցես տն մերոյ և փրկչին յի քի:

Որով զհացս օրհնեալ
մարմին ճշմարտապէս ա
րասցես տն մերոյ և փրկ
չին Յսի Քսի։

Եւ զբաժակս օրհնեալ
արիւն ստուգապէս ա
րասցես տն մերոյ և փրկ
չին Յսի Քսի։

Եւ զբաժակս օրհնեալ
արիւն ստուգապէս արաս
ցես տն մերոյ և փրկչին
Յսի Քսի։

Եւ զբաժակս օրհնեալ
արիւն ստուգապէս արաս
ցես տն մերոյ և փրկչին
Յսի Քսի։

Որով զհացս և զգինիս
օրհնեալ մարմին և արիւն
ճշմարտապէս արասցես
տն մերոյ և փրկչին Յսի
Քսի փոխարկելով հոգ
ւովդ քով սրբով։

---

Երէք անգամ կրկնէ զաղօթս
Եւ սարկաւագն 'ի ցած ամէն․
Եր

Եւ Քահանայն այնու հետև
ոչ բարձրագոյն․ այլ խոնարհա
գոյն քան զնծայն տարածեալ
զձեռսն․ աղօթէ 'ի ծածուկ․

Որպէս զի եղիցի սա ամե
նեցուն մեզ մերձեցելոցս,
յանդատապարտութի 'ի
քաւութի և 'ի թողութի
մեղաց։

Սովաւ շնորհեա զսէր,
զհաստատութի և զցանկալի
զխաղաղութի ամ աշխար
հի․ Սրբոյ եկեղեցւոյ և
ամ ուղղափառ Եպիսկո
պոսաց։ Քահանայից։
Սարկաւագաց․ Թագա
ւորաց․ Աշխարհի․ Իշխա
նաց․ ժողովրդոց․ Ճանա
պարհորդելոց․ Նաւելոց․
Կապելոց․ Վտանգելոց․
Աշխատելոց․ Եւ որք 'ի
պատերազմունս բարբա
րոսաց։ Սովաւ և օդոց
շնորհեա զբարեխառնու
թի, և անդոց զպտղաբե
րու

թի։ Եւ ախտացելոց ՚ի պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն։

Սովաւ հանգո՛յ զամենեսեան ՚ի Քրիստոս յառաջագոյն զննջեցեալսն։

Զնախահարս։

Զհայրապետս։

Զմարգարէս։

Զառաքեալս։

Զվկայեալս։

Զեպիսկոպոսունս։

Զերիցունս։

Զսարկաւագունս։

Եւ զընտիր ուխտ եկեղեցւոյ քո սրբոյ։ Եւ զամենեսեան յաշխարհական կարգէ՝ զարս և զկանայս հաւատով վախճանեալս։

Դ. Ձայն.

Ընդ որս և մեզ այց արասցես բարերար տէր՝ աղաչեմք։

Դպիրքն.

Յիշեա տէր և ողորմեա։

Քահանայն.

Աստուածածնին սրբոյ կուսին մարիամու։ Եւ յովհաննու մկրտչին։ Ստեփաննոսի նախավկային։

Եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ ՚ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպիրքն.

Յիշեա տէր և ողորմեա։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն Ձեռնամած ասասցէ.

Առաքելոց սրբոց. մար։

Եւ մինչ Սարկաւագն զքարոզս ասէ. Քահանայն զաղօթս սկսանի. զի ՚ի միասին աւարտեսցեն.

Յիշեա տէր և ողորմեա և օրհնեա զսուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի քո։

Զոր փրկեցեր պատուա



կան

կան արեամբ միածնի քո,
և աղատեցեր խաչիւն որ
բով: Շնորհեա սմա զան
շարժ զխաղաղութի:
Յիշեա՛ Տր ևողորմեա, և
օրհնեա զՏմ ուղղափառ
եպիսկոպոսունս, որք ու
ղիղ վարդապետութբ հա
մառօտեն 'ի մեզ զբանն
Ճշմարտութեան:

Ի ձայն.

Սուս առաւել զեպիսկո
պոսապետն մեր այս անուն
շնորհեսցես մեզ ընդ եր
կայն աւուրս ուղիղ վար
դապետութեամբ:

Եւ ապա 'ի ձախակողմ սեղա
նոյն քարոզէ սարկաւագն ձև ով
աղօթից 'ի թիւ. Զի միք մաս
ածին կարծեցով շրջեսցէ.
Զի ածին խոսրովունէ ասացեալ
զառաջնոյն օրինակացն.

Գոհութի և փառաբա:

Դպիրն.

Ըստ ամենայնի և յաղա՛:

Եւ ընդ սկսանել Սարկաւա
զՔարոզս։Քահանայն զաղօթս
սկսանի զի 'եմասին աւար
տեսցի.

Յիշեա՛ Տր ևողորմեա և
օրհնեա զքո սուաքի կա
ցեալ ժողովուրդս, և
զպատարագիս մատուցօղս
Եւ պարգևեա սոյն ըղ
պիտոյսն՝ և օգտակարսն:
Յիշեա՛ Տր ևողորմեա, և
օրհնեա զուխտաւորս՝ և
զպտղաբերիչս եկեղեցւոյ
քում սրբոյ, և որք յիշեն
զաղքատս ողորմածութբ:
Եւ հատո նց զպարտս նց
ըստ ընդաբոյս առատու
թե քոյ. հարիւրապատիկ
աստ և'ի հանդերձելումն:
Յիշեա՛ Տր ևողորմեա. և
դթա 'ի հոգիս հանգուցե
լոցն: Հանգո զնոսա, և
լուսաւորեա, և դասաւո
րեա

րեալ ընդ Տես. քո յարքայ
ութեանդ երկնից, և արժա
նի արա ողորմութեան քում։
Յիշեա Տէր՝ և զհոգի ծա-
ռայիս քո այս անուն,
և ողորմեա նմա ըստ մեծի
ողորմութեան քում, և
հանգո այցելութեամբ ՚ի լոյս
երեսաց քոց։
Եւ եթէ կենդանի է.
Փրկեա զնա յամ որոգայ
թից հոգւոյ և մարմնոյ.
Յիշեա Տէր՝ և զայնոսիկ
որք յանձնեցին մեզ յիշա
տակել յաղօթս, զկենդա
նիս՝ և զհանգուցեալս. կա
ռավարեա զկեանս հայց
մանց նոցա, և զմերս։
Ընդ ուղղորդն՝ եւր լինել
փրկութեանս։ Եւ վարձա
տրեա բոլորեցունց զան
անց՝ և երանելի բարու
թեանդ։ Եւ զտեալ զնոր
հուրդս մեր՝ տաճարայոյ
յընդունակութեան մարմնոյ

և արեան միածնի քոյ Տն
մերոյ և փրկչին յի. քսի։
Ընդ որում քեզ հօր ամե
նակալի՝ հանդերձ կենդա
նարար և ազատիչ սբ հոգ
ւոյդ վայելէ փառք։

Քահանայն դառնայ խաչակնքէ
զժողովուրդն. եւ ասէ բարձր.
Եւ եղիցի ողորմութիւն մե
ծին Այ և փրկչին մերոյ յսի
քսի՝ ընդ ձեզ ընդ ամե
նեսեանդ։

Ժողովուրդ.

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն.

Եւ ևս խաղաղութեան։

Ժողովուրդ.

Տր ողորմեա։

Սարկաւագն.

Ամենայն սրբովք զօրս։

---

Եւ անդէն ընդ քարոզելս.
Քահանայն բազկատարած խոր
հրդաբար աղօթէ ՚ի ծածուկ.
Ի ճշմարտութեան և
Ած հայր

հայր ողորմութեան գոհանամք զքէն։ Որ ՚ի վեր քան զերանելի նահապետացն, զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն։ Ս՛ զի նոցա ած կոչեցար. իսկ մեզ հայր հաճեցար անուանիլ գթալով։ Եւ այժմ տէր աղաչեմք զքեզ. զայսպիսի առ ՚ի քէն շնորհս եւ զպատուական անուանադրութեանս շնորհս։ Օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո ՚ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ։

՚Ի ձայն.

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւոր հայր, երգել եւ ասել.

---

Եւ ժողովուրդքն բազկատարած եղանակէն.

Հայր մեր որ յերկինս.

Եւ մինչ նք երգեն. Քահանայն աղօթէ ՚ի ծածուկ.

Տր տէրանց ած աստուածոց։ Թագաւոր յաւիտենական։ Արարիչ ամ արարածոց, հայր տեառն մերոյ Յսի Քսի։

Մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա ՚ի չարէ. եւ ապրեցո ՚ի փորձութենէ։

՚Ի ձայն.

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս ամէն։ Խաղաղութի ընդ ամենեսեան։

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն.

Այ երկրպագեսցուք։

Դպիրքն.

Առաջի քո տէր։

Քահանայն խոնարհի եւ ամ ժողովուրդն խոնարհի՝ ի վայր.
Եւ քահանայն աղօթէ
ի ծածուկ.

Որ աղբիւրդ ես կենաց. եւ բղխումն ողորմութե հոգիդ սբ։ Ողորմեա ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիրպագանեն ածութեանդ քո։ Պահեա զսոսա անբիծս, տպաւորեա յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցականս։ Ըստ ի ժառանգութե եւ ի վիճակ հանդերձելոցդ բարեաց՝

Դձայն.

Քրիստոսի Յիսուսի Տեառն մերում ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ եւ Հօր ամենակալի՝ վայելէ փառք իշխանութի եւ պատ։

Եւ Քահանայն առնու զսբ հացն ՚ի ձեռն. Եւ Սարկաւագն ձայնեացէ բարձր.

Պրօս խումէ.

Եւ Քահանայն բարձրացուցանէ զայն երեւ ժողովրդեանն եւ ասէ.

Ի Սրբութի Սրբոց։
Դպիրքն բարձր ձայնեն.
Միայն սբ, միայն տէր։
Քահանայն.
Օրհնեալ Հայր Սուրբ։
Ած Ճշմարիտ։
Դպիրքն.
Ամէն.
Քահանայն.
Օրհնեալ Որդին Սբ
Ած Ճշմարիտ.
Դպիրքն ամէն.
Քահանայն.
Օրհնեալ Հոգին Սբ
Ած Ճշմարիտ.
Դպիրքն ամէն.
Քահանայն.
Օրհնութի Եւ Փառք
Հօր Եւ Որդւոյ Եւ
Ս Ըդ Հոգ

Հոգւոյն սրբոյ, Այժմ։
Դպիրքն ամէն.
Հայր որ՝ որդիէ սուրբ
հոգիդ որ։
Եւ մինչ նորայ երգէն զայս,
Քահանայն խնկարկեսցի. Եւ
աղօթեսցէ ՚ի ծածուկ.
Նայեաց տէր մեր Յս. Քս
յերկնից՝ ՚ի սրբութենէ
քումմէ, և յաթոռոյ փա
ռաց թագաւորութե քո։
Եկ ՚ի սրբել և ՚ի կեցուցա
նել զմեզ։ Որ ընդ հօր նս
տիս՝ և աստ պատարագիս։
Արժանի արա տալ մեզ
յանարատ մարմնոյ քում
մէ՝ և ՚ի պատուական արե
նէ. և ՚ի ձեռն մեր ամ ժո
ղովրդեանս ևքեղ վայելէ։

Եւ զայս ասացեալ երկրպա
գեսցէ, և համբուրեսցէ զսեղա
նըն. Եւ առեալ զսուրբ մար
մինն ողջ թանայ յանապական
արիւնն և ասասցէ.
Տէր աստուած մեր՝ որ կոչեցեր
Ըէ

զմեզ յանուն միածնի որ
դւոյ քո քրիստոնեայս։
Եւ շնորհեցեր մեզ մկր
տութի հոգևոր աւազա
նաւն ՚ի թողութի մեղաց։
Եւ արժանի արարեր ըզ
մեզ հաղորդիլ սբ մարմնոյ
և արեան միածնի քո։
Եւ այժմ աղաչեմք ըզ
քեզ՝ տր արա զմեզ ար
ժանի ընդունել զսբ խոր
հուրդս զայս՝ մեզ ՚ի մեղաց
թողութիւն։ Եւ գոհու
թեամբ փառաւորել ըզ
քեզ ընդ հօր և Սուրբ
Հոգւոյդ այժմ և մ։

---

Եւ բարձրացուցանէ սկն երե
ժողովրդեանն, և ասասցէ ա
նսայ բարձր.

Ի սբ ՚ի սբ պատուական
մարմնոյ և յարենէ տն
մերոյ և փրկչին յսի քսի։
Ճաշակեսցուք սրբութբ
որ

որ իջեալ ՚ի յերկնից՝ բաշ
խի ՚ի միջի մերում ։
Սա է Կեանք, Յոյս,
Յարութիւն, Քաւութիւն
Եւ Թողութիւն մեղաց ։
Սաղմոս ասացէք տեառն
այ մերոյ ։ Սաղմոս ասա
ցէք երկնաւոր թագաւո
րիս մերում անմահի, որ
նստի ՚ի կառս քերովբէա
կանս ։

Եւ Սարկաւագն ձայնէ
բարձր ։

Սաղմոս ասացէք տեառն
այ մերում ։

Դպիրքն եղանակեն ։

Քս պատարագեալ ։

Մինչ նոքայ երգեն քահանայն
առնու զմարմինն ՚ի ձեռսն Եւ
համբուրէ արտասուօք զայս
ասելով ։

Զոր Օրհնութիւն, կամ
զոր Գոհութիւն ՚ի վերա
Հացիս Եւ բաժակիս
մատուսցուք ։ Բ. Ա. Յս ըզ
քեզ միայն օրհնեմք Հօրն
ընդ Հօր Եւ ամենասր
Հոգւոյդ այժմ ։

Դարձեալ ասէ ։

Խոստովանիմ Եւ հաւա
տամ, զի դու ես Քս որդի
այ, որ բարձեր զմեղս աշ
խարհի ։

Եւ Բեկեալ արկցէ ՚ի բաժա
կն արեան Ասելով ։

Լրումն Հոգւոյն Սրբոյ ։

Եւ ապա առեալ զմի մասն
՚ի ձեռն իւր ասէ ՚ի ծածուկ ար
տասուօք և գոհութեամբ ։ առ
Հայր Եւ Որդի ։

ՀԱՅՐ ՍՈՒՐԲ՝
որ անուանեցեր
զմեզ անուանակ
ցութեամբ միած
նի քո ։ Եւ լուսա
ւորեցեր մկրտութեամբ
հոգևոր աւազանին ։

ե Բր

Արժանի՛ արա ընդունել
զմե՛ խորհուրդս զայս՝ մեզ
՚ի մեղաց թողութիւն ։
Տպաւորեա ՚ի մեզ զշնոր
հս հոգւոյդ սրբոյ, որ
՚ի սուրբ առաքելումն, որք
ճաշակեցին, և եղեն մաք
րինք ամենայն աշխարհի ։
Եւ արդ տէր հայր բարե
րար, շնորհակալութիւնս
զայս մատուցանեմ ճաշակ
ման երեկոյին աշակերտա
ցըն, բառնալով զխաւար
մեղաց խմաց՝ մի հայեր յանար
ժանութիւնս իմ ․ այլ որ
գեղցես զշնորհս հոգւոյդ
սրբոյ ։ Արդ ընդ անբաւ
մարդասիրութեան քում,
պարգևեա զամ քաւիչ
մեղաց, լուծիչ յանցանաց ։
Որ խոստացաւ և ասաց
Տէրն մեր Յս Քս ․ թէ
ամ որ ուտէ զմարմին իմ,
և ըմպէ զարիւն իմ, կեցցէ
յաւիտեան ։ Արդ արա



զօծ մեզ ՚ի քաւութիւն, զի
որք կերիցեն և արբցեն ՚ի
սմանէ, հանցեն զօրհնու
թիւն և զփառս Հօր և
Որդւոյ և Հոգւոյդ սր
բոյ ․ այժմ ։

Խոստովանութիւն ամենեցուն ․

Գոհանամ զքէն Քս
թագաւոր ․ որ արժանի
արարեր զիս զանարժանս՝
հաղորդել մարմնոյ և
արեան քո ։ Եւ այժմ
աղաչեմ զքեզ ․ մի լիցի
սա ՚ինձ ՚ի դատապարտու
թիւն ․ այլ ՚ի քաւութիւն
և ՚ի թողութիւն մեղաց ։
Յառողջութիւն հոգւոյ
և մարմնոյ ։ Եւ ՚ի կատա
րումն ամ գործոց առա
քինութեան ։ Որպէս զի
սրբեսցէ սա զանձն իմ ․
և զհոգի և զմարմին իմ ։
Եւ արասցէ զիս տաճար
բնակարան ամենասուրբ եր

բոր

րորդութեղ: Զի ընդ
մեզ քո արժանի եղէց
փառաւորել զքեզ ընդ
Հօր և ընդ Սբ Հոգւոյդ
այժմ:

Յովհաննու ոսկեբերանի ասա
ցեալ Աղօթ.

Գոհանամ և մեծացուցա
նեմ և փառաւորեմ զքեզ
Տր Ած իմ, զի զիս զանար
ժանս՝ արժանացուցեր
յաւուր յայսմիկ, հաղոր
դակից լինել Ածային և
սոսկալի խորհրդոյ քոյ.
անարատ մարմնոյդ և՛ ի պա
տուական արեանդ. վս
այսորիկ զսոսա ՚ի քարեխօ
սութիւն ունելով՝ աղա
չեմ յամ աւուրս՝ և՛ ի ժա
մանակս կենաց իմոց ընդ
սրբութն քո պահեա զիս:
Որպէս զի յիշելով զբա
րեգթութիւնս քո և
կենդանի լինել ընդ քեզ:
կէ

Որ փառն մեր հարհարե
ցար՝ եմեռար և յարեար:
Մի՛ մերձեսցի Տր իմ և
Ած իմ. խորտակիչն, կիզե
լով անձին իմոյ պատուա
կան արեամբդ քոյ.
Բժշկարար՝ մաքրեա զիս
սրբոց. յամ մեղելոց գոր
ծոց իմոց, որ միայնդես
անմեղ: Ամրացոյ զկեան
սիմ Տր, յամ փորձութե.
և զպատերազմեցնիմ դար
ձոյ յինէն յետս, պատկա
ռեալ և ամաչեցեալ. որ
հալ յառնէ ՚ի վերայ իմ:
Ամրացո զգնացս մտաց
և լեզուի իմոյ, և զամ ճա
նապարհս մարմնոյ իմոյ:
Եր հանապազորդ ընդ իս
ըստ անսուտ խոստմանց
քոց, թէ որ ուտէ զմար
մին իմ, և ըմպէ զարիւն իմ,
նա յիս բնակեսցէ՝ և ես ՚ի
նմա: Դու ասացեր մար
դասէր, կացոյ զբանս Ած
ային

ային անլուծանելի հրամա
նաց քոց: Քանզի դու ես
ած ողորմութե, և գը
թութե, և մարդասիրութե.
և պարգևիչ ամ բարեաց:
Եւ քեզ վայելէ փառք
հանդերձ հարբդ և ամե
նասբ հոգւոյդ, այժմ
և միշտ:

Եւ ապա անադրեսցէ զինքն.
և խնդրեսցէ 'ի Տեառնէն Ա.Յ
զպէսպէս հայցուածս անձին
իւրոյ. և ամենայն ժողովրդեանն
և ամենայն աշխարհի. Եւ թո
ղութիւն խնդրեսցէ իւրոյ յան
ցուածոցն. թշնամեացն և ատե
լեացն. Եւ անդէն ահիւ և դո
ղութեամբ ճաշակեսցէ 'ի մար
մնոյն՝ և արբցէ 'ի բաժակէն
ասելով.

Մարմին քո անապական
լիցի ինձ 'ի կեանս. և սուրբ
արիւն քո 'ի քաւութիւն
և 'ի թողութիւն մեղաց:

Եւ թէ Սարկաւագ կայ. հա
ղորդեսցի նմա. Եւ առնու

Սարկաւագն զսկիհն եդեալ
'ի ժողովուրդն ասելով.

Բարձր ձայնիւ.

Երկիւղիւ և հաւատով.
յառաջ մատիք. և սրբու
թբ հաղորդեցարուք:

Դպիրքն ասէն բարձր ձայնիւ:

Ած մեր և տր մեր երևե
ցաւ մեզ. օրհնեալ եկեալ
անուամբ տեառն:

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադ
րեալն. ապա ուխտ 'ի բեմբանն.
ըստ կարգին այս զսրբութիւնն.
Եւ ամենայն արժանաւոր ժողո
վուրդքն հաղորդին. Եւ յետ
հաղորդելոյն՝ խաչակնքէ զժո
ղովուրդն և ասէ բարձր.

Կեցո տր զժողովուրդս
քո. և օրհնեա զժառան
գութիւնս քո. հովուեա և
բարձրացո զսոսա յայսմ
հետէ մինչև յաւիտեան:

Եւ յետ հաղորդելոյն երգեն
Դպիրքն.

Լցաք 'ի բարութենէ քոց:



Եւ

Եւ մինչ նոքայ երգէին Քահանայն ասէ զաղօթս.

Գոհանամք զքէն Հայր ամենակալ որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ զեկեղեցի, տաճար սրբութեան փառաբանի սուրբ Երրորդութեանդ ։

Ալէլուիայ ։

Գոհանամք զքէն Քրիստոս Թագաւոր, պարգեւեցեր մեզ կենդանութիւն, կենարար մարմնով եւ արեամբ քով սրբով ։ Շնորհեա զքաւութիւն եւ զմեծ զողորմութիւն ։ Ալէլուեա ։

Գոհանամք զքէն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր զեկեղեցի ։ Անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ՝ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան ։

Ալէլուիա ։

Սարկաւագն քարոզէ.

Եւ եւս խաղաղութեան ։

Եւ եւս հաւատով ընկալ ։

Ժողովուրդն.

Գոհանամք զքէն Տէր որ կերակրեցեր ։

Եւ քահանայն ասէ՝ ի ծածուկ.

Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած մեր. որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ՚ի սրբութիւն կենդանութեան ։ Սովիմբ պահեա զմեզ սուրբ՝ եւ անարատ. բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ ։ Հովուեա զմեզ յանդաստանն կամաց քոց սրբոց՝ եւ բարեսիրեաց ։ Որով ամրացեալք յամենայն բանսարկուին. ընդդիմութեանց քում. եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի ։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ՝ եւ ճշմարիտ հովուիդ հետեւել ։ Եւ առ ՚ի քէն ընդունել



զպատ

զպատրաստեալ տեղին յար-
քայութեանդ երկնից ։
Ընդ մեր, և տր մեր · և փր-
կիչ Յս Քս ։ Որեւ օրհ-
նեալ ընդ Հօր, և ընդ սբ
Հոգւոյդ · այժմ և՛ ։

Խաղաղութիւն Ամենեցուն ·

Անքննելին · անհաս · երրեակ
միութեանդ · հաստիչ · ըն-
դունող · և անբաժանելի՛
Միասնականն սբ երրորդու-
թեանդ · վայելեն փառք իշ-
խանութիւն և պս՛ ։

Սբ երկրպագեալ համբուրէ
զսեղանն · Սբ իջեալ ՚ի մէջ
եկեղեցւոյն ասէ ՚ի ձայն ·

Որ օրհնես զայնոսիկ · որ
օրհնեն զքեզ տր · և սբ առ-
նես զյուսացեալս ՚ի քեզ ։
Կեցո զժողովուրդս քո ·
և օրհնեա զժառանգու-
թիւնս քո ։ Զլրումն եկե-
ղեցւոյ քո պահեա ։ Սրբեա
զսոսա , որք ողջունեցին



սիրով զվայելչութիւն տան
քո ։ Դու զմեզ փառա-
ւորեա՛ Աստուածային զօրութեամբ
քով · և մի՛ թողուր զյու-
սացեալսս ՚ի քեզ ։ Զխա-
ղաղութիւն քո պարգևեա՛
ամենայն աշխարհի ·
Եկեղեցեաց քահանայից ·
Թագաւորաց · քրիստոնէից
մերոց · և զինուորեալ մա-
կանց նոցա · և ամ ժողովր-
դեանս ։ Զի ամ տուրք
բարիք · և ամ պարգևք -
կատարեալք ՚ի վերուստեն
իջեալ առ ՚ի քէն ։
Որեւ հայր լուսոյ · և քեզ
վայելեն, փառք իշխանու-
թիւն և պատիւ ։

Դպիրքն ասեն · երիցս
անդամ ·

Եղիցի անուն տն օրհնեալ
յայսմ հետէ մինչև յաւի-
տեան ։

Սբ քահանայն դառնայ ՚ի վերա
ժողովրդեանն և ասէ ·

Կատա

Առաքելոցն օրհնաց եւ մարգարէից գուես Քրիստոս Տէր փրկիչ մեր։ Որ ցուցեր զմեզ հայրական անձին բերնութիւնս քո։ Որով եւ զմեզ հոգւովդ քով սրբեա։

Եւ ասասցեն դպիրքն.

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամ ժամ։

Եւ քահանայն խաչանիշեսցէ զժողովուրդն. Եւ ասասցէ Բարձր.

Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ հոգւոյն։ Երթայք խաղաղութեամբ, Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան։

Եւ Ըասցեն սաղմոս. ԼԳ.

Ի Տր պարծեսցի անձն իմ։

Եւ ընդ սաղմոսին բաշխեսցի նշխար Յաւարտմանն Դպիրքն Օրթի.

Աւետարան ըստ Յովհաննու. Գլուխ Առաջին Համ ր. ա

ԻՍԿԶԲԱ նէ էր Բանն. եւ Բանն էր առ Ած. եւ Ած էր Բանն։ Նա էր ի սկզբանէ առ Ած։ Ամենայն ինչ նովաւ եղեւ եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւ։ Նովաւ կեանք էր. եւ կեանքն էր լոյս մարդկան։ Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ եւ խաւար նմա ոչ եղեւ հասու։ Եղեւ այրմի առաքեալ յԱյ անուն նմա Յովհաննէս։ Սա եկն ի վկայութիւն զի վկայեսցէ վասն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ոչ էր նա լոյսն այլ զի վկայեսցէ վասն լու սոյն։

Զ խա

տօն։ Էր լոյսն ճշմարիտ
որ լուսաւոր առնէ զամ
մարդ որ գալոց է յաշխարհ։
Յաշխարհի էր. և աշխարհ
նովաւ եղև. և աշխարհ զնա
ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն
և իւրքն զնա ոչ ընկալան։
Իսկ որք ընկալանն զնա.
ետ նոցա իշխանութիւն որդիս
այ լինել. որոց հաւատաս
ցեն յանուն նորա։ Որք ոչ
յարենէ. և ոչ ՚ի կամաց
մարմնոյ և ոչ ՚ի կամաց առն
այլ յայ ծնան։ Եւ Բանն
Մարմին եղև և բնակե
ցաւ ՚ի մեզ։ Եւ տեսաք
զփառս նորա. զփառս իբրև
զմիածնի առ ՚ի հօրէ լի
շնորհօք և ճշմարտութեամբ։
Քարոզ մը խաչիւս Ս. զօրք.
Պահպանեա զմեզ քս այ։
Հայր մեր, որ յերկինս ես։
Եւ դարձցի յարևելս Աւետա
րան դեսցէ Առաջի Սեղանոյն.
Ամէն.

Եւ Ասասցէ.
Տր Յս Քս Աստ Ողոր
մեա ինձ։ Եւ մատակարա
րի Գործարանիս՝ Գրի
գոր դպրի Մարզուանեց
ւոյ՝ և ծնողաց նորին։

Եւ մեռալ Պաշտկաւագարանն
մերկացի՝ եզգեստուցն
Եւ եր թէցէ խաղա
ղութեամբ.

## Ի ՄՐԽՁԱՐՆԻ

ծայրին պատարա
գամատոյցի այսօրիկ
աղաչեմ զքեզ արդ
իմ անմեղադիր լի
նել իրթնութեան նորատիպ
տառիս և դեռաշէն գոր
ծարանիս, որով հետև ամ
իրաց սկիզբն դժուարու
թիւն է։ Բայց համբերու
թեամբ և հեզութեամբ՝ այլ և յօ
ժար կամօք ջեռամեռանդ
սիրով և ամենակատար
յուսադրութեանս իմոյ՝
Ետես

ետես բարերարն մեծ՝ և
ետուր՝ կարողութիւն և զօ
րութիւն առանց տկարանա
լոյ ըստ մարմնոյ. վն որոյ
յառաջ արկեալ իրաւու
թիւնս՝ եհաս կատարումն
սբ խորհրդատետրս. ան
բողջապէս յետ կատար
ման մեծի մատենիս՝ յայս
մաւուր սբ գրոցս որբոյն
ոյ ։ Ուր թէպէտ գործ
իմն տաժանելի էր և դժո
արին մեզ գործավարացս
բայց յոյժ վայելուչ ձեզ
վայելողացդ թէ ըստ ձև
ոյն և թէ ըստ ճոխութեան։
Զոր և հաւատամ թէ հա
ճելի լինելոց իցէ ՚իփառս
Բանի և ՚իպարծանս ազգին
մերոյ և ի գովեստ սրբազան
Հայրապետին Տեառն
. և յիշատակ
անջնջելի տանն Գրիգորի
որդւոյ մկրտչի ։ Արդ որք
վայելէք զսա յիշեսջիք յա
ղօթս Մահտեսի Ղազարն
և իւր եղբայր Տիրատուրն
և Մահտեսի Զաքարն.
և Մահտեսի Պուկան.
Պալին. Մելքանն. և իւր
եղբօրն Մաաքէլ Սար
գսապետեան ։ և Յակոբն.
և դուք յիշեալ լիջիք
առաջի անմահ սբ պատա
րագին. Ամէն ։

ի թվ ՌՄԻԶ.

Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна